

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

No 1253-Ն/2


«28» 07 2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ «ԱԲ ՍԵՐՈՒՆԴ» ԴՊՐՈՑԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ
ԵՎ «ԱԲ ՍԵՐՈՒՆԴ» ԾՐԱԳԻՐԸ ՓՈՐՁԱՐԿՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ
մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի
ներկայացրած «ԱԲ (արհեստական բանականություն) սերունդ» դպրոցական
փորձարարական ծրագիրը՝ համաձայն Հավելված 1-ի:
2. Հաստատել «ԱԲ (արհեստական բանականություն) դպրոցական
փորձարարական ծրագիրը 2023 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2026
թվականի օգոստոս ամիսը փորձարկող հաստատությունների անվանական
ցանկը՝ համաձայն Հավելված 2-ի:

 Invalid signature

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

Ժ. ԱՆԴՐԵԱՅԱՆ

Հավելված 1

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարի 2023թ. հուլիսի 28-ի
N 1253-Ա/2 հրամանի

«ԱԲ սերունդ» դպրոցական փորձարարական ծրագիր

Նպատակ

«ԱԲ սերունդ» դպրոցական ծրագիրը «ԱԲ սերունդ» նախագծի առաջին բաղադրիչն է, որը փորձարարական ձևաչափով կներդրվի միջնակարգ կրթության երրորդ աստիճան (10-12-րդ դասարաններ) ունեցող ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ Հաստատություն) և նպատակ ունի սովորողների շրջանում.

- ձևավորել մաթեմատիկայի և համակարգչային գիտության հիմքային կարողունակությունները, որոնք անհրաժեշտ են Արհեստական բանականության (այսուհետ՝ ԱԲ) ոլորտում մասնագիտանալու համար,
- բարձրացնել աշակերտների գրագիտությունը և մոտիվացիան ԱԲ և մաթեմատիկահեն մասնագիտություններում հետազոտական և նորարարի ուղով շարունակելու համար,
- ձևավորել արհեստական բանականության վերաբերյալ բազային կարողունակություններ և գործնական գիտելիքներ:

«ԱԲ սերունդ» նախագիծը նպատակ ունի ստեղծելու ԱԲ ոլորտի գիտնականի և նորարարի կրթական ուղին՝ սկսած դպրոցից: Նախագիծը և սույն փորձարարական ծրագիրը մշակվել են Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի կողմից (այսուհետ՝ Հիմնադրամ), իրականացվում են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) աջակցությամբ և ոլորտի կառույցների ու մասնավոր հատվածի հետ լայնամասշտաբ համագործակցությամբ:

Սույն փորձարարական ծրագրի ժամկետ է սահմանվում 2023 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2026 թվականի օգոստոս ամիսը:

Ծրագրի իրականացումը

1. Սույն փորձարարական ծրագրով սովորողները ուսումնասիրում են հետևյալ դասընթացները համաձայն «ԱԲ սերունդ» դպրոցական փորձարարական ծրագրի ուղղորդող/օրինակելի ուսումնական պլանի:

1) Խորացված մաթեմատիկան՝ համաձայն «Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր» առարկայի նոր չափորոշիչի և ծրագրի պահանջների և Հիմնադրամի կողմից մշակված մեթոդաբանության, որը նպաստում է ստացված գիտելիքների կիրառելիության ապահովմանն ու նախապատրաստում Արհեստական բանականություն ուսումնասիրելուն:

2) Մասնագիտական առարկաները (Համակարգչային գիտությունը (Python ծրագրավորում) և Արհեստական բանականություն)՝ որպես ընտրովի առարկաներ՝ համաձայն Հիմնադրամի կողմից մշակված և Նախարարության կողմից երաշխավորված ծրագրերի և մեթոդաբանության,

3) ԱԲ նախագծային ուսուցումը:

2. Սույն փորձարարական ծրագրի ուսումնական պլանով սահմանված մասնագիտական առարկաները հանդիսանում են նոր ներդրված դասընթացներ և չեն փոխարինում հանրակրթական հիմնական ծրագրի ուսումնական պլանով հաստատված առարկաներին: «Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր» առարկան սովորողներն ուսումնասիրում են Հիմնադրամի կողմից մշակված և Նախարարության կողմից հավանության արժանացած մեթոդաբանությամբ:

3. Փորձարարական ծրագրի շրջանակում իրականացվելու է միջնակարգ կրթության երրորդ աստիճան (10-12-րդ դասարաններ) ունեցող հաստատությունների բաց ընտրություն Հիմնադրամի մշակված կարգի հիման վրա:

4. Հաստատությունը սույն փորձարարական ծրագրում ընդգրկվելուց հետո առաջադրում է համակարգողի, ով պատասխանատու է լինելու Հաստատության կողմից փորձարարական ծրագրի իրականացման համակարգման, հաշվետվությունների ներկայացման, մոնիթորինգի, Հիմնադրամի և ծրագրի շահառուների հետ հաղորդակցության ապահովումը համար:

5. Հաստատությունը սույն փորձարարական ծրագրում ընդգրկվելուց հետո պարտավորվում է համագործակցել Հիմնադրամի հետ՝ ծրագրի արդյունավետ իրականացմանն աջակցելու համար:

6. Ուսումնական հաստատության ֆիզիկատեխնիկական պայմանների գնահատման արդյունքում Հաստատությունը՝ Հիմնադրամի ու Նախարարության աջակցությամբ, կազմում և իրականացնում է համակարգչային լաբորատորիաների վերազինման աշխատանքներ՝ ըստ սույն փորձարարական ծրագրի կարիքների պահանջների:

7. Հաստատությունը սույն փորձարարական ծրագրով ուսուցումն իրականացնում է ԱԲ ուղղությունն ընտրած սովորողների համար միջնակարգ կրթության երրորդ աստիճանում (10-12-րդ դասարաններում) (այսուհետ՝ «ԱԲ խումբ»)՝ ըստ սովորողների կողմից ուսումնական ծրագրի յուրացման արդյունքի և ցանկության՝ ձևավորելով նվազագույնը մեկ ԱԲ խումբ:

8. Հաստատությունում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է, որը կարող է իրականացվել հիբրիդային (դասարանային և/կամ դասարանում առցանց բաղադրիչի կիրառմամբ) եղանակով:

9. Հաստատությունը «ԱԲ սերունդ» դպրոցական փորձարարական ծրագրով ուսուցում կազմակերպելու նպատակով յուրաքանչյուր ուսումնական տարվա համար հաստատում է տարեկան ուսումնական պլանը՝ հիմք ընդունելով «ԱԲ սերունդ» դպրոցական փորձարարական ծրագրի ուղղորդող/օրինակելի ուսումնական պլանը:

10. «ԱԲ սերունդ» դպրոցական փորձարարական ծրագրի ուղղորդող/օրինակելի ուսումնական պլանով սահմանված ժամաքանակում փոփոխություն կարող է կատարվել միայն Հիմնադրամի համաձայնությամբ:

11. ԱԲ խմբի սովորողների կազմի փոփոխությունը՝ համալրումը և/կամ այլ խումբ տեղափոխումը կատարվում է Հիմնադրամի և Հաստատության մանկավարժական խորհրդի որոշման հիման վրա:

12. Մասնագիտական առարկաների պարագայում սովորողների նվազագույն շեմից (5 սովորող) պակաս սովորողների խմբի պարագայում սովորողները հիբրիդային ուսուցմամբ ուսումնառությունը շարունակում են սույն փորձարարական ծրագիրն իրականացնող մեկ այլ Հաստատության սովորողների հետ՝ ձևավորելով մեկ խումբ:

13. «Արհեստական բանականություն» առարկայի դասարանային (առկա) եղանակով դասավանդման նպատակով մեկ խումբ է ձևավորում այն Հաստատությունում, որտեղ առկա է դասընթացն ուսումնասիրող ավելի մեծ թվով աշակերտներ: Այս պարագայում դասավանդող մասնագետին դասընթացի արդյունավետ իրականացման համար աջակցում է տվյալ Հաստատության կողմից առաջադրված թեկնածուն (օգնականը):

14. 10-րդ և 11-րդ դասարանների սովորողները փոխադրվում են փորձարարական ծրագրի շրջանակներում նախատեսված հաջորդ աստիճան ամփոփիչ ստուգողական աշխատանքների արդյունքների հիման վրա, որոնք անցկացվում են գրավոր կամ բանավոր՝ Հիմնադրամի սահմանած կարգի և ժամանակացույցի համաձայն:

15. 12-րդ դասարանում սովորողներն իրականացնում են նախագծային ուսումնառություն՝ ձևավորելով 3-5-հոգանոց խմբեր:

16. 10-րդ դասարանի ավարտին անցկացվում են Մաթեմատիկայի և Համակարգչային գիտության (Python ծրագրավորման), 11-րդ դասարանի ավարտին՝ Մաթեմատիկայի և Արհեստական բանականության, 12-րդ դասարանի ավարտին՝ Մաթեմատիկայի և Արհեստական բանականության նախագծային ուսուցման ամփոփիչ ստուգողական աշխատանքները և շնորհվում համապատասխան կրեդիտներ, որոնք գրանցվում են սովորողի ամփոփաթերթում:

17. Փորձարարական ծրագրի օրինակելի ուսումնական պլանով նախատեսված առարկայախմբերը գրանցվում են էլեկտրոնային դասամատյանում դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում դպրոցի դասարանների կազմավորման և դասաբաշխման, թեմատիկ պլանների և դասացուցակի հիման վրա՝ ինքնաշխատ եղանակով:

18. Դասավանդողների ընտրությունը և վերապատրաստումը սահմանվում են հետևյալ կերպ.

18.1. «Մաթեմատիկա» առարկայի դասավանդողների ընտրությունն իրականացվում է Հաստատության ընտրությանը զուգահեռ՝ հիմք ընդունելով Հիմնադրամի կողմից սահմանված ընտրության չափանիշները:

18.1.1. Մեկ Հաստատությունում ԱԲ խմբում դասավանդող մասնագետների քանակը որոշվում է ըստ վերապատրաստման արդյունքների և դասավանդման կարիքների (մասնագետների ծանրաբեռնվածություն, ձևավորված խմբերի քանակ):

18.2. «Համակարգչային գիտություն (Python ծրագրավորում)» առարկայի դասավանդողների ընտրությունն իրականացվում է Հաստատության

ընտրությանը զուգահեռ, Հաստատության «Թվային գրագիտություն և համակարգչային գրագիտություն» առարկայի ուսուցիչների կազմից Հաստատության տնօրենի առաջադրմամբ՝ հիմք ընդունելով Հիմնադրամի կողմից սահմանված ընտրության չափանիշները:

18.2.1. «Համակարգչային գիտություն (Python ծրագրավորում)» առարկայի դասավանդողները դասապրոցեսն իրականացնում են Հիմնադրամի կողմից իրենց կցված մասնագիտական ղեկավարի շարունակական ուղղորդմամբ:

18.3. «Արհեստական բանականություն» առարկայի դասավանդողների ընտրությունն իրականացվում է Հաստատության կողմից մրցութային կարգով՝ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան: Մրցութային հանձնաժողովում պետք է ներգրավված լինի Հիմնադրամի կողմից առաջադրված մեկ անդամ:

18.3.1. Սույն փորձարարական ծրագրի շրջանակներում «Արհեստական բանականություն» առարկայի դասավանդողների՝ մանկավարժի որակավորման բացակայության պարագայում թույլատրվում է դասավանդումը, աշխատանքի ընդունվելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով առնվազն 30 կրեդիտ հավաքելու պայմանով:

18.3.2. 11-րդ դասարանում «Արհեստական բանականություն» առարկայի դասավանդման և 12-րդ դասարանում նախագծային ուսուցում կազմակերպելու համար Հաստատությունն առաջադրում է թեկնածուի (օգնականի)՝ համաձայն Հիմնադրամի ներկայացրած պահանջների, ով աջակցում է դասավանդող մասնագետին դասընթացի արդյունավետ իրականացման համար՝ դասարանային և դասարանում առցանց եղանականով:

18.4. Սույն փորձարարական ծրագրի դասավանդողները պարտադիր մասնակցում են Հիմնադրամի կողմից իրականացվող վերապատրաստումներին

և մենթորության ծրագրին՝ համաձայն Հիմնադրամի կողմից սահմանված ժամանակացույցի:

18.4.1. Վերապատրաստման և մենթորության ծրագրի նպատակն է դասավանդողներին զինել դասավանդման ժամանակակից աշակերտակենտրոն մեթոդաբանությամբ և առարկայական գիտելիքներով:

**«ԱԲ սերունդ» դպրոցական փորձարարական
ծրագրի օրինակելի ուսումնական պլան**

Առարկայախումբ		Շաբաթական ժամերի		
		X	XI	XII / I կիս
	Հոսքային բաղադրիչ	15.5	16	15
Էտրացված ուսուցմամբ առարկաներ	Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր*	5	5	5
	Երկրաչափություն	3	3	3
	Բնագիտական առարկա	5	5	5
	Համակարգչային գիտություն (Python ծրագրավորում)*	2.5		
	Մեքենայական ուսուցում*		3	
	ԱԲ նախագծային ուսուցում*			2
	Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ	14	14	14
Ընդհանուր	Հայոց լեզու	2	2	2
	Հայ գրականություն	2	2	2
	Հայոց պատմություն	2	2	2
	Հասարակագիտություն	1	1	1
	Ռուսաց լեզու	1	1	1
	Անգլերեն	2	2	2
	Ֆիզկուլտուրա	2	2	2
	ՆՁՊ	1	1	1
	ԹԳՀԳ	1	1	1
	Դպրոցական բաղադրիչ	3.5	3	4

*Խորացված ուսուցմամբ առարկաների ուսումնասիրումը պարտադիր է «ԱԲ սերունդ» նախագծի շրջանակում Արհեստական բանականության ուղղությամբ կրթությունը շարունակելու համար: «Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր», Համակարգչային գիտություն (Python ծրագրավորում)» և «Արհեստական բանականություն» առարկաները իրականացվում են «ԱԲ սերունդ» դպրոցական փորձարարական ծրագրի մշակած մեթոդաբանությամբ, կրթական ծրագրերով և ռեսուրսներով, որոնք երաշխավորված և/կամ հաստատված են ՀՀ Նախարարության կողմից:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարի 2023թ. հուլիսի 28-ի
N 1253-Ա/2 հրամանի

ԱՆՎԱՆԱԿԱՆ ՑԱՆԿ

«ԱԲ ՍԵՐՈՒՆԴ» ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՓՈՐՁԱՐԿՈՂ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

	ՄԱՐԶ/ՔԱՂԱՔ	ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԸ
1.	Արմավիր	Վաղարշապատի Մ. Գորկու անվան թիվ 5 ավագ դպրոց
2.	Արմավիր	էօրնեկեան հանրակրթական դպրոց
3.	Գեղարքունիք	Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց
4.	Լոռի	ՀԱՊՀ հիմնադրամի Վանաձորի մասնաճյուղի ավագ դպրոց
5.	Լոռի	Վանաձորի Գրիբոյեդովի անվան թիվ 11 ավագ դպրոց
6.	Լոռի	Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոց
7.	Կոտայք	Չարենցավանի Մ. Մաշտոցի անվան ավագ դպրոց
8.	Կոտայք	Հրազդանի Հ. Օրբելու անվան թիվ 13 ավագ դպրոց
9.	Կոտայք	Եղվարդի թիվ 1 ավագ դպրոց
10.	Կոտայք	Հրազդանի Խ. Աբովյանի անվան թիվ 1 ավագ դպրոց

11.	Սյունիք	Կապանի թիվ 2 ավագ դպրոց
12.	Շիրակ	Գյումրու թիվ 1 ավագ դպրոց
13.	Շիրակ	Գյումրու Տնտեսագիտական վարժարան
14.	Երևան	Երևանի թիվ 198 ավագ դպրոց
15.	Երևան	Երևանի Գ. Գյուլբենկյանի անվան թիվ 190 ավագ դպրոց
16.	Երևան	Եվրասիա հենակետային վարժարան